

ՄԵՃՄՈՒՄԷ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand Rue de Pera, Tuzim 65

Հաճախող իրի քե՛ւս ետե՛ր ՉԱՐՇԵՆՊԻՆԶ վե
ճՈՒՄԱ ԻՐԹԷՍԻ կիսկերի ճեշր օլունուր :

ՆԻՒՍԻԷՍԻ
30 ՌԱՐԱ

مجموعه اخبار
يك اوغلي تقسيم جادى نومرد 70

ԱՊՐԵՆ ԳԻՅԱԹԻԱՐԸ. = Իսթանպուլ իշին սենթեմբեր 60 շ. = 6 ապրիլ 35. = Թայրա իշին սենթեմբեր 85. = 6 Ապրիլ 45 շ. = Մեմուրի քե՛ւս քե՛ւս իշին սենթեմբեր 20 ֆր. = Բոսթա իւնթեմբեր 15 կիսկերի 60 բարա տոր: = ԻԱԱՆԱԹ ՇԱՐՇԵՆՊԻՆԶ. = 1 ինձի ասիֆեմբեր սըրասը 5, 2 ինձի վե Յիւնթիւ ասիֆեմբերին չէր սըրասը 3, վե կիսկերի ստիֆեմբերին պէ՛տէր սըրասը 1 շ. տոր: = Զօգ տէ՛ֆա տէ՛րճ Իսթեմբուլ իշին այրեմա բաղարըգ օլունուր:

Հազեթայա միւթէալլիք խուսուսաթ իշին ՅՈՒՀԱՆՆԵՍ թՕԼԱՅԵՍԱ միւրաճաւթ օլունա = Իսթանպուլի Պէյոզլունա ճատտէի քե՛ւս քե՛ւս շ. 65:

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Անարատ Յղութեան նուիրումն առաջին յօդուածով մը ցուցուցինք թէ Հայ. Եկեղեցւոյ շարականները սոյն վարդապետութիւնը կը պարունակեն, թէ մեր մէջ բերած և ուսումնասիրած բոլոր վկայութիւնները՝ անհասկնալի, անբացատրելի պիտի մնային, եթէ, Ս. Կոյսին՝ ոչ միայն ներգործական, այլև սկզբնական մեղքէ ալ ազատ ըլլալը չի վարդապետէին: Այդ ուսումնասիրութիւնը կատարած էինք մասնաւոր հերքելու համար Տէր-Սարգսեանի պաշտպանած այն կարծիքը, որով իր «Բնական Կրօնագիտութիւն»ին մէջ մեղք է յանցանք կը վերագրէ ոչ միայն Մարիամի, այլև անոր Աստուածային Որդւոյն. Յիսուսի թշնամիներն անգամ պաշտպանեցան, երբ Փրկիչը համարձակօրէն կը հարցնէր անոնց. «Ձեռքէ՛ս ո՛վ կրնայ իմ վրաս մեղք մը հաստատուի»: Տէր-Սարգսեան կը յանդգնէր պատասխանել թէ ըստ Կրօնի իր հայրութիւններն արդարացիոյ ապացոյցներ կը փնտռէ նոյն իսկ շարականներուն մէջ, ու որչափ պզտիկ կը ձգէ մեր Հայրերը, երբ իր մէջ բերած ու քննասիրած պարբերութեան առաջին մասը միայն նկատի կ'առնէ, անտես ընելով երկրորդ մասը որ առաջինին բուն բանալին է: Աւելորդ է, արդէն, ճշմարիտ կրօնագիտութիւն և քննադատութիւն փնտռել Տէր-Սարգսեանը այդ գրքին մէջ որ, հակառակ իր յաւակնոտ տիպոյսին, ամենին նուիրական հաւատարմութեամբ դէմ ուղղուած անարժան պարսկապարտութիւն մ'է: Յիսուսի ու Մարիամի փառքը կը պահանջէ որ անդրադառնանք Յակոբ Ա. ի ու Վարդան Վարդապետի շարականներուն, ցուցնելու համար թէ ասոնք, Անարատ Յղութեան նկատմամբ, շատ աւելի խորունկ վարդապետութիւն մը կը պարունակեն. ըսել կ'ուզենք թէ այդ շարականները ոչ միայն Անարատ Յղութեան վարդապետութիւնը կը դաւանին, այլև սոյն վարդապետութեան աստուածաբանական հիմքը կը պարզեն մեր առջև: Այս կէտը, զոր հազիւ թէ ուրուագծած էինք մեր նախորդ գրութեամբ, հոս մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ պիտի ընենք, միշտ մեզի վկայ բռնելով վերելիչ ու շարականները որոնք այնքան առատ ու բազում գանձեր կը պարունակեն այս մասին:

Շատ երջանիկ պիտի ըլլայինք, եթէ հետեւեալ տողերը՝ աւելի լաւ գնահատել տային մեր գեղեցիկ շարականները, ու աւելի եռանդուն ոէր մը ներշնչէին Յիսուսի ու Մարիամի նկատմամբ:

Եթէ քրիստոնէական աւանդութեան միջառակարաններուն հարցնենք թէ որովք են Անարատ Յղութեան աստուածաբանական հիմքը, կը պատասխանեն թէ Ս. Կոյսին Յղութիւնն անարատ է, նախ որովհետեւ Ս. Կոյսը՝ Աստուծոյ Մայրն է.

երկրորդ՝ որովհետեւ Ս. Կոյսը՝ Փրկիչին Մայրն է: Արդ՝ մեր շարականներն իրենք ալ սոյն երկու իրողութեանց վրայ կը հիմնեն Մարիամի սկզբնական սրբութիւնը. այս իրողութիւններն երբեմն մին երբեմն ալ միւսը կը ներկայացնեն իբր հիմ Ս. Կոյսին Անարատ Յղութեան, որովհետեւ երկուքն ալ միեւնոյն լոյսը կը սփռեն այս ճշմարտութեան վրայ: Արդարեւ, Մարիամ մեր Փրկիչին Մայրն է և անոր փրկակից (բայց ոչ միեւնոյն չափով ու աստիճանով), որովհետեւ Աստուծոյ Մայրն է. կամ Աստուծոյ Մայրն է, որպէս զի իր Որդւոյն հետ ու իր Որդւոյն միջոցով վերականգնէ ինկած մարդկութիւնը: Հոս անգամ մըն ալ կրկինք որ շարականները՝ Մարգարէութեան խորհուրդէն շատ առաջ, Ս. Կոյսին գոյութեան առաջին վայրկեանէն անոր կը վերագրեն այս երկու փառաւոր տիպոյցները: Ու մէկ մըն ալ դիտենք որ Աստուծոյ Մայր ըլլալը, պատահական բան մը չէ Ս. Կոյսին համար. ընդհակառակը, Աստուծոյ Մայր ըլլալու համար է որ գոյութեան իրողութիւնն ունենաւ և ինքն իր Մարիամն ստեղծելով նպատակ չէ ունենցած զինքը ճանչնալու ու սիրելու կարող էակ մը դրացնել, հայտնաւորելու և առաջ ուղած է իրեն Մայր մը պատրաստել. այնպէս որ Մարիամ՝ երկրաւոր Աղամին դուռտըրը ըլլալէ առաջ, Աստուծոյ յաւիտեական կարգադրութեան համեմատ, Մայրն է երկնաւոր Աղամին. այսինքն մեր նախնոր դուռտըրն ըլլալէ ետք չէ որ Յիսուսի Մայր եղաւ, այլ՝ Յիսուսի Մայր ըլլալու համար է որ Աղամին ծնաւ: Զայս նկատելով Յակոբ Ա. «Երգ նոր» մը կը խնդրէ «Ի Ծննդեան Մօր Տեառն. քանի որ ծնաւ զանժամանակն ի Հօրէ ծնեալն՝ այսօր ծնաւ յաւիտէ արգանդէ: Տուք օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ»: Տարբեր կերպով չի խօսիր Վարդան Վարդապետ՝ երբ, Ս. Յովակիմի և Ս. Աննայի անունը առնել կը փառաբանէ «Միամայրն Մարիամը» ու կ'ըսէ. «Վ քանի Աստուած «որ ի կանուխ ժամանակաց ստորագրեցեր զանօրէնութեան զոսեղի, տաճար և քաղաք ինկեալ բարձր անուանող զուր բարձրելոյ. այսօր ստեղծուեցաւ յայնմեալ ցուցաւ բնագործան Աստուածութեան զոսեղի Կոյսն Մարիամ»: «... Բարձր արարէք զծնեալն այսօր զմայր մաքուր բանին զմիշտ Կոյսն»: Մարիամ՝ Աստուծոյ Մայր ըլլալու կանչուած է. «Ի ծնողութիւն զոսեղիս եղաւ...» (Վարդ. վարդ.). Մարիամ «մորենին» է «յոր վառեցաւ հուրն Աստուածային. զոր ետես Մովսէս զօրինակ Կուսին ի Սինայ լցեալ լուսամբ տառայց»: Մարիամ «գեղմն» է «ընդունել զգօգն երկնային, յորմէ հոսեաց անձրեւն կենաց և բոլեաց աշխարհի աղբիւրն իմաստից» (Յակոբ Ա.): Մարիամ «Երախտ աստուածային» է և «արեւելք իմանալի» (Վարդ. վարդ.): Երբ շարականները մեզի կը սորվեցնեն թէ Ամենասուրբ Երրորդութիւնը դարեւոր սկիզբէն հոգ տարած է իրեն արժանի Մայր մը ստեղծելու, յայնմեալէն կը ցուցնեն թէ այդ ստեղծութիւնը քերա-

զանցօրէն քերական է ու շնորհաց կառուածին մէջ աւելի կ'ունենայ. այսինքն այդ արարածը՝ անձեւ ու արարածը ինքի մը չէ զոր յետոյ պէտք ըլլայ մաքուր ու զարդարել, Աստուծոյ բնակարանն ընելու համար. հայտնաւորեալ ու լուսապայծառ տաճար մըն է անիկա որ Աստուծոյ սէրէն ու զօրութեան կը ծնի ընդունելին մաքրուած, զարդարուած ու նուիրագործուած. «Որ ի կանուխ ժամանակաց ստորագրեցեր զանօրէնութեան զոսեղի, տաճար և քաղաք ինկեալ...»: Ս. Կոյսը՝ «անդաստանն» է «մաքուր ի փշոց մեղաց» (Յակոբ Ա.), անտարակոյտ սկզբնական մեղքէն փրկելէն, քանի որ ծնած օրը՝ անձնական մեղք չի կրնար ունենալ. «սուրբ» է անիկա, «մաքուր», «հրաշագեղ», «սուսպայծառ», «սնարատ», «չաւառն Կովտաց» և «վառարան աստուածային բողոյն». վառն զի ամէն բանէ առաջ Աստուծոյ Մայրն է. ու կը վայել որ, Աստուծոյ ետք, անմասն սրբութեամբ մը փայլի այդ Կոյսը զոր Հայր Աստուած իր Որդւոյն Մայր կ'ընտրէ ի յաւիտեանց:

Մարիամի Անարատ Յղութիւնը, եթէ զինքը նկատենք իբր Մայր Փրկիչին, Մարիամ նոր Եւան է նոր Աղամին զով. ինքն է որ կը բառնայ այն անձնք զոր Եւա մեր վերայ հրաւիրեց. «անիմից լուծից». Եւայի օրինիչն է անիկա. «... Սուրբ զՄարիամ. ինչ զօրհիշելու Եւային». և ի՞նչպէս կրնար այս օրհնութիւնը բերել մեզի, եթէ վայրկեան մ'իսկ գերին ըլլաւ աստուծային տեսք թէ երբ Յիսուսի Մայրը կը մօտենայ, ի՞նչպէս կը փարատի մեղքէն խաւարը, նման գիշերուան մութին որ տեղի կուտայ ծագող արշալոյսին. «Որ զլոյսն երկնային ծագեցեր մարդկան զլուծից մեղաց մթութեան», այս, Մարիամ արշալոյսն է այն երջանիկ օրուան ուր Երկնքը՝ Երկրի հետ կը հաշտուի, ուր բարկութիւնը տեղի կուտայ զթաւեան, և մահը կենաց. Մարիամ, ստեղծուելուն պէս՝ մեր ապագայ փրկութեան գրաւակները կ'ըլլայ. «Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան». և Աստուած ուրիշ կերպով չողորմիր մեզի, բայց եթէ սուրբ եւ անարատ կոյս մը պարզեցնելով մեր բնութեան. «Յուր բնութեանս պարզեց զլոյսն...» (Յակոբ Ա.): «... մարգարէից հանդիսարան և գրաւական կենաց մարդկան, Մարիամ Աստուածամայր» (Վարդ. վարդ.):

Ահա այն Մայրը զոր Բանի Աստուած մասնակից կ'ընէ՝ մարդկութեան թշնամիին դէմ տարած իր յաղթութիւններուն, շարականները, ու և կերպով, տեղի չեն տար ենթադրելու որ Մարիամ, յաղթութեան պատուոյն կանուխէ առաջ, վարկեան մ'իսկ աստուծային լուծը կրած ըլլայ:

Եթէ հարցուի որ սկզբնական մեղաց նկատմամբ Մարիամի այս ապահարկութիւնը, այս սքանչելի առանձնաշնորհութիւնը ուրիշ կուգայ իրեն. կը պատասխանենք թէ Ս. Կոյսը զայն կը պարտի Աստուծոյ բարութեան և Յիսուսի արդիւնքներուն որուն Մայրը պիտի ըլլար մարմնոյ կողմէն:

Պիտի առարկուի թէ Յիսուսի արդիւնքները տակուին գոյութիւն չունենին, ինչպէս կրնային Ս. Կոյսն այսօրի դերաւ. զանցաւ անգուցական շնորհներով օժտել: Ճշմարիտ է թէ այդ արդիւնքները ինքնին գոյութիւն չունէին, այն աստիճանի որ Փրկիչը դուռ չէր ծնած. ու կ'աւելցնենք թէ միեւնոյն դժուարութիւնը կար, նաեւ Գրիգորի զալուստն առաջ փրկութեան հասնող սուրբերուն համար: Բայց գիտնալու ենք որ Աստուած, որուն առջև բոլոր դարերը ներկայ են, կը նախատեսէր Յիսուսի արդիւնքները ի նպատակ Մարիամի, այսինքն կը տեսներ այդ Կոյսին Որդւոյն որ ինչպէս վրայ իր արիւնը կը նուիրէր ամեն մարդոց ու մասնաւորապէս իր Մօր համար. հետեւաբար Աստուած կրնար իբր կանխաւճառ Ս. Կոյսին պարգեւել բոլոր այդ շնորհները. վառն զի զիտեք որ հաստատուի ոչ կառկածելի էր, ոչ ալ անբաւական: Ասկէ կը հետեւի թէ Մարիամ ինքն ալ փրկուած է, բայց ինչպէս կ'ըսէինք, մենք շատ աւելի վսեմ կերպով, որովհետեւ Աստուծոյ ողորմութիւնը Մարիամի գոյութեան առաջին վայրկեանէն, թշնամի հարուածները կանխելով, զանի բոլորովին զերծ պահած է սկզբնական մեղաց արատներէն:

Պէտք է մեզի պատիւ սեպենք այսքան սուրբ և սքանչելի Մօր մը փառքերն առնեն կողմ հուշակել. այս մասին մեր Հայրերը՝ գեղեցիկ օրինակներ կ'ընծայեն մեզի. իրենց արժանի դաւաններ ըլլանք. Մարիամ ինքն ալ կը հրաւիրէ զմեզ իր և իր Աստուածային Որդւոյն փառաց աշխատիլ և ասոր փոխարէն կը խոստանայ Երկրիքի անմահ բարեբերը:

ՔԱԴԵՆՈՍ ՏԻՇԵՏԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Բերա, 22 Մայիս

— Նոստրո Գաւառ... մոռնի Գաւառ... —

Եւթաթ իրիկուն է, ուլ ատեն: Գործերը շտկած rentier մը պէս և ապրելէն զո՛ւ՝ երջանիկ լաւատեսի մը ամբողջ անփոյթ երեւոյթով, կը սկզկուի անվերջ մայթերուն երկայնքը, կանգ առնելու իւրաքանչիւր ցուցափեղկի առջև և կամ գլխով կ'ընդունի pimpante արագաշարժներու alléchant քառագեղութիւնները, — flânerie մը, ուրիշ գիտէ հրապուրել միայն ինձի պէս միջուկ ծուծը vieux pérote մը:

Երգչուհի մը չափ chic ու պծուած pâtisserieներու ապակեղաններուն ետին, օղային կազերու աղուորցնող փայլուն լոյսերուն տակ և պէպէս անուշեղէններու ու պոփոցներու կանոնաւոր կուտակումէն մէջտեղ, Բերացի կ'ընդունի արդիւնք իրենց զրաւիչ ըտրուճաւաւ տօլետներով կը զարդանկարեն խանութը, դուռն անցնողներու հրացկոտ նայուածքները գրաւելու համար իրարու հետ մրցելով կարծես, մինչ շոգոյայն ու գրիւն օր:

ՏԵՂԵԹԼԻ ՊԻՐ ԳԱԶՈՒ. — ՆԻՆԵՐԳ.

«. Լօստրատան ապրիլ 3-տե չէ քրիստոս
պիւր թէչէկրաֆտա պէշ վճնիւ աթի պիւր
տիրիւմիւ տիր . «Թօքրիտան «Տէլլի թէչ
լէկրաֆտա քէչիտէ օլտանան պիւր թէչէկ-
րաֆնամէ տիեօր քի , Թօքրիտա տէվէրան
իտէլ շայնաւարա վէ Աղահի նամ Ճարօժ
գաղէթ սաւընը պէնանընա կէօրէ , Միգա-
տօ՝ տօղրուեա Ռուսիանա կիթմէք շար-
թըլա պիւր չօգ Ռուս էսթրէրէնին սերպէզօթ
պրաքմազ նիեւթինտէ խիւ , էկէք Ռու-
սիա հիւքիւմէթի՝ Ռուս էսթրէրէնին տօղ-
րուտան տօղրուեա Ռուսիանա քատար ալ-
տէթ իթմէսին քապուլ իթմէք , ճարտօ-
պու էսթրէրի պիթարաֆ մէմէքէթէրու
թութուպ , թէքրար մլլտանը հարպա-
կէօնտէրի իօէ , օ վաքըթ Ճարօնիս հիւ-
քիւմէթի , արթըք էսթրէրի սէրպէթի պը-
րաքմանամաք տրու Աննաք տիկնի թա-
րաֆտան տա Ճարօնիս հիւքիւմէթի , էսթր-

— Բժուկականէ խտրէսինին իանընա
կէօրէ, Դաւաթա վէ Պէոյուռ բօթա
գոթոռաւարնա՝ Ատաւարաան, Այիթէֆա
նօտան վէ Մազըր. քէօյուհաւէն մաատա
բաթաթաթն տիկէր մանկէրինէ կէօնաւ-
րիւնէն. քէօթապաւաւըն պըրադըմաւը մէն
խաթիւլ տիր, Ջաթնէ Բօթա խտրէս
օ մանկէր իչին ալընա 10 բարապը
գաւթ բօթալլար չըգալուըլ օյուպ, պոնա
լար պիւնիւմէ բօթա շիպէլէրինաւ տա-
թըլմագա տըր :

իշին պիր սուրի քա՛ստ մը, եօզաս ճհայէ՛թ
մի օլառուղը անխալըմազ իւզըէ դապըթա-
նա թահգըզաթա իպթիսաթա իտիլմիշ, վե-
մէգըբար քրիթէ մէմարին վէ խառնէմէսի
իսթիճվապ օլունմըշ արը: Ժամկոյ Նդիս
կէլէնէ իկէն միւմաիէյէ՛ն եպիսկոպոսն
սիմօնէ Յակոբ իշ պրիլքտէ քրիսխէն կէլ-
տիկհնի՛ վէ անընչա պրիլքտէ կիթտիկհնի՛
հիյնի իսթիճվապընտա պէնան իթմիշ տիր-
Պունուն իւղէդիքնէ սիմօնէ Յակոբ իս-
թիճվապ օլունուպ, եպիսկոպոսը նէ՛
կէօրմիւշ վէ նէ՛ տէ պրիլքտէ քրիսխէն
պրիլմիշ օլառուղըն օշոյլէ՛ թշ տիր Յակոբ
կէլն ինքնաարընա ռաղմիշ թէլէգըթի՛ տիր-
միւ տիր Զապըթանա թահգըզաթա աւվամ
իտիլիեօր:

(461p)